

Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաշարեր - 11-րդ դասարան - տևողությունը՝ 150 րոպե

Միայն հաղթանակ, սիրելի՛ մասնակից:

1. «Նրա հոգին առաքինությունների բյուրեղացումն էր. մարդասեր, ընկերասեր, կարեկցող, ազնիվ և անհունորեն համեստ: Նրա գրականությունն էլ իր լուրջ, ծանր և անկեղծ հոգու կնիքն էր կրում բոլոր էջերի վրա: Նա ինքը ներշնչում էր այն գաղափարը, թե գիրքը մեծ իրականացում է, արյունով շինված բան, ճշմարտության և արդարության անոթ»:
Ո՞վ է ասույթի հեղինակը: Ներկայացրո՛ւ Նար-Դոսի ստեղծագործական ուղին: Վերլուծի՛ր քեզ հոգեհարազատ որևէ ստեղծագործություն:

5 մ.

2. Ներկայացրո՛ւ Գրիգոր Չոհրապի քաղաքական- հասարակական գործունեությունը XX դարասկզբին:

Ո՞ւմ են ուղղված այս խոսքերը. «Օր մը, ապահով եղեք, որ հաշիվ պիտի պահանջվի ձեզմե, և դուք չպիտի կարենաք արդարացնել ձեր արարքները»: Ելնելով մերօրյա իրականությունից՝ պատասխանի՛ր Չոհրապին:.

5 մ.

3. Ազգային – քաղաքական ի՞նչ գործունեությամբ է զբաղվել Թումանյանը XX դարասկզբին: Ի՞նչ պատվանունների է արժանացել այդ գործունեության արդյունքում: Գրի՛ր Թումանյանին բնութագրող երկու ասույթ:

5 մ.

4. Գրի՛ր Չարենցի բանաստեղծությունը՝ նվիրված Ավետիք Իսահակյանին: Ներկայացրո՛ւ Իսահակյանի սերը բնագրային հղումներով:

5 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝

Ս. Աբազյան